

ոյ միայն թելազրովին այլ և ուրիշներուն ամենաթիթեւ հրապուրանաց ալ տեղիք կու տան» : Եւ եթէ ծշմարիս է այս , «ի՞նչ եղենագործութիւններ չեն կրնար մագնիսացնողը և այլը՝ զործել տալ երիտասարդաց , աղայոց , և այն . — նոր կը մնայ այն ատեն անհատին , ընտանեաց , նոյն իսկ ընկերութեան ապահովութիւնը» :

Հակառակորդք մագնիսական քնոյ այս պիս մանրամասնորէն ապացուցանելով թէ մագնիսական քունն՝ բնուրենէն դուրս , վեասակոր , և անբարյական է , կը հետեւցրներ թէ ուրեմն սատանայական է , այսինքն՝ սատանային ազգեցութեամբ տուած կու զան մագնիսական քնոյ ձեռքոդի կատարուած բուրր զարմանալի գործերն : Այդ պատճառու հմաւու բժիշկը և մագնիսացրնողը չեն կը ռաւարեկ՝ թէ ի՞նչպէս մագնիսական քունն այսպիսի երեւոյթներ կու տայ , Եւ մեր այս կարծիքը , կը ըսեն , կը հաստատէ նաեւ այդ զիսեկի կէտն ալ՝ որ մագնիսական քնոյ պաշտպանք մեծաւ մասօմն յայտնի անհաւատ են և ամրարիշտը , ինչպէս Ռիշէ , Ֆիրիէ , Սէփիլլի , Շարպոյ , Ցօնաթոյ , Մորսլիլ , և այն . — Մագնիսական քունն կ'ենթազրէ և կամ՝ տուած կը բերէ զանհաւատութիւն :

Այսպէս կը խօսին կը գրեն և այսչափ փաստեր կը բերեն հակառակորդք մագնիսական քնոյ : — Յաջորդ զիսոյ մէջ պիտի տեսնենք՝ պաշտպաններուն փասաերը ի նըպատ մագնիսական քնոյ :

Եարայարեկի Հ. Ա. Սարեան



ՀԱՆԴԵՍ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

1. — Քահանապահական խնդիր . Համառօտ ակնարկ Արիստակէս եպիսկոպոսի (Սեղրական) . Առարկա . 1900 .

Քանի մը տարի տուած լրագիրք և ամսագիրք Քահանայական խնդիր տիտղոսով հրատարակեցին այլ և այլ յօնուածներ , մերդ եւս իրարու հակառակ կարծեօք . բայց Սեղրա-

կեանի իմաստաներն ու կարծիքներն ամէն տեղ արձագանք տալով ընկունելութիւն գտան՝ գուցէ նոյն իսկ այս տեսակ խնդրոց կարեւորութիւն չառուպներէն : — Որդ ներկայ բաւական ծաւալով գիրքս Ազիտակէս եպիսկոպոսին՝ իւր թեմական այցելութեան ժամանակ ունեցած զգացումները , քննութիւնները , խորհրդագութիւնները ու գաղափարները կը բովանդակէ : Ի սկզբան կը նկարագրէ Ցուչիի , Տաթեւու , և այն , եկեղեցական կորպաց ու անձանց և եկեղեցեաց խեցութիւնը , անկումը և իսարիսով վիճակը , եկեղեցականաց յետին աստիճանի ափիսութիւնը , որը մինչեւ կարղալ անգամ չեն զիտեր : Այս ամէն բանի վրայ ցաւալից սրոտվ աեղեկութիւնն կու տայ յէջմիածին , և այդքան թշուառութեան զարման տանելու միջոցներ եւս կը ցուցընք :

Մենք ուրախ ենք որ կրցեր է հեղինակն յաջորդութեամբ պարզել և նկարագրել այդքան քահանայից , և այն , խեղճութիւնը , որը Ա . Լուսաւորչայ որդիք ենք ըսելով պահածան յանձնենա , հեռի անոր հսկիլն ու իմաստներէն և հոգեշնուն զիտութենէն : Բայց ներուի այսքան միայն խորհրդածել՝ որ այդ խաւարամած տղիտութիւնն ու աղջտը նոր բան չեն , այլ հնցած ժամանելով զայու : Զարմանց են երեք զեր հիմանայ զայու յէջմիածին եկեղեցականութիւնն , մինչդեռ մենք իսկ եւրոպայի մէջ հանդիպեր ենք մի անգամէն աելի այցելու տղէտ հայ եկեղեցականաց , որոնց անպատիւ կը նեն իրենց որբազան զրոշմը :

2. — GEISTLICHES UND WELTLICHES AUS DEM TÜRKISCH-GRIECHISCHEN ORIENT. — Selbsterlebtes und selbstgesehenes von Heinrich Gelzer. Leipzig. 1900.

Պատկերազարդ , 253 էջ զիրմաներէն երկասիրսութիւն մ'է ծանօթ հայագէտ գեղգերի , յորում հեղինակն կը գրէ պարզ ոճով իրեն տեսածները ու հանդիպածները՝ յարեւելիս ուղեւորութեան ժամանակ : — Առաջին մասը

Ա . Կը սկսի Ցունաց եկեղեցականութեան

վրայ խօսելով, կը պարզէ անոնց եկեղեցւոյն կազմակերպութիւնը ի Տաճկաստան. — Ֆեռներ հին պատմութիւնը կ'ընէ. զայդ ապա կը նկատե եւս իրեւ Յանաց Պատրիարքական աթոռ. — այս աթոռոյն կանոնադրութիւնները և Սիանհոգոսը կը նկարադրէ : Կոստանդին Ե. յոյն պատրիարքի վրայ կը խօսի : Ալպա կ'անցնի Բյուսաց՝ Երուսալեմայ մէջ անեցած անզեաց վրայ : — Խալքի և Եշիանաց կղզիներուն վրայ կը գրէ. նոյնպէս առաջնոյն մէջ գտնուած յոյն տառուածաբառանական պարոցին վրայ. Վերջապէս Յանաց կրկին եկեղեցական տօներու վրայ խօսելին յետոյ, երկայն կը խօսի անոնց կրօնասիրովեան և եկեղեցական քաղաքակիտութեան վրայ. կը համեմատէ ուսւ և յոյն եւ եկեղեցներուն ինքնազբիութիւնը. — Յունաստանի մէջ զանուած մոլորդեան կրօնական կենացը կը պատմէ :

Բ. Հայոց (Էջմիածնական) եկեղեցական կազմակերպութեան վրայ կը խօսի. Օրմաննեանը կը յիշէ, և իրեն առ սա ըրած պլցրովիմը կը պատմէ :

Գ. Պողպար Լքսարքին, պողպարական հերձուածին, անոնց Մակեդոնից մէջ ունեցած ազգայնութեան վճեներուն վրայ կը խօսի :

Դ. Մաս մ'ալ նուիրած է Հասմիւեական Շւզզափառ Եկեղեցիոյ : — Ե. Քահանայապետին նուիրակին, կամոզիկէ կրօնական հասաստութեանց, Լեւոն ԺԳ. ի միութեան փափաքին, Օգոստանեան կրօնաւորաց, Վեննական Հարց վրայ խօսելով կը նըրէ այս առաջին մասը :

Անցնելով երկրորդ մասին,

Ա. Տաճիկ մուզովուրզը, անոր կրօնասիրովիմը կը նկարագրէ :

Բ. Թուուր Էֆենտիներուն վրայ, և այն, կը խօսի :

Գ. Թուուր կառավարութեան, արդի Սուլթանին, բանակին վրայ խօսելով կ'աւարաէ այդ մասը :

Երրորդին մէջ կը խօսի արեւելեան հպատակ ազաց վրայ .

Ա. Ցոյնը, Տաճկաստանի մէջ և գուրս :

Բ. Այժմեան Յունաստան :

Գ. Սպանիական Հրեայք :

Դ. Հայոց՝ յաշս Եւրոպայի :

Ե. Հայ վաճառականը, և այլն :

Ինչպէս ներկայ Հրատարակութենէն այս համառօտ բազմազակութենէն կ'երեւի յայտնի, թէսկւա և հեղինակն ունի իրեն սեփական արձիկները, բայց շատ հետաքրքրացարժ երկ մ'է, մանաւանդ որ գրազն ակտանաես եղած է և ականջարուր :

3. — Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանականութիւն. — Տումար — Զանազան գիտելիքներ — Վիճակագրական տեղեկութիւններ : Կ. Պօլիս. 1904 :

Ուստանը լիովին կը համաձայնի Օրացոյց իւր բազար ճոխ պարունակութեամբը և պատկերներով : Ալոաջին գրիմէլ երեսուն վեց էջերը կը բառէ Տումարն, որ մասնաւոր նարութիւն մը չի ներկայացըներ : Իսկ Պր. Հրանտ Աստաւրին աշխատասիրած Զանազան գիտելիքները, որոց բամսին մէջ կան եկեղեցական, դպրոցական, բարեգործական, գրական, գիտական և արուեստագիտական թուականներ, քաղաքած միջնորդ և ժողովրդական գործութեաններ : Դուրս նաև ասքերգութիւններն ամսական վերածերէ և առաջնորդ է ասքերգութիւններն ամսական վրայ, գնիելով անուանց կարեւոր ցանկ մ'ալ : Ասկէ յետոյ

Կ. Պոլոյց Հայերը և իրենց Պատրիարքները վերապարզ 77 էջն մինչեւ 258, Օրացոյցից ծաւալին համեմատութեամբ, ընդարձակօրէն կը պատմէ շատ հետաքրքրական հայ եկեղեցական պատմութեան կէտերը, շշափելով երեսն միջնորդ և ժողովրդական միջազկւրերը, ինչ ինչ միին սառւերամած կասրները, որոց մէջ Հեղինակն ուզեր է ջանալ միայն պատմական նշանաւութիւնը պարզել, սակայն թուի թէ զես սառւերն պատած է, և գուցէ մանանակն զես աւելի պարզէ քան թէ միակողմանի գրութիւններ : — Օրացոյցիս ամենէն աւելի կարեւոր և ընտիր մասն այս կընայ համարուիլ, մանաւանդ որ գիւրին աշխատառութիւն մ'ալ չէ, այլ կարոտ շատ քննութեանց և շրջահայեցավեան :

զորս յիրափ գործածելու զանց չէ ըրած
յօրինողն:

Ժամանակին բաժանումը և շափը – Նոր
զիտեր – Գործի մարդոց համար – և ու-
րիշ գործնական մասեր եւս զրուած են Հրա-
տարակութեանս մէջ, որպէս զի բայ հա-
րելոցն շահաւետ թլայ զայն գործածողնե-
րուն:

Օմանեան կայսրութիւն բամբն եւս կը
պարունակէ գործնական անսններ, պաշ-
տօններ, և այլն:

Հետաքրքրական է նոյնպէս էջմիածնայ, Աղմամօրայ, Ասոյ կաթողիկոսաց ցանկն.
Նոյնպէս կայ ցանկ մը Հայ կաթողիկ հա-
տարակութեան, Հայ բազորական հաստարա-
կութեան, և գործեալ ուրիշ տաճկահպատակ
ազգերու վրունիկուն:

Կը տեսնուի ջանք մը ամէն տարի ճո-
խագոյն հրատարակելու այդ Ընդարձակ Օ-
րացոյցը. յստամբ թէ զայ տարի ուրիշ նոր
զեղեցիկութիւններով Հրատարակութիւն կը
հնարուի:

4. – RECHERCHES SUR LA SYNTAXE COM-
PARÉE DE L'ARMÉNIEN, par M. A. Meillet.
(Extrait des Mémoires de la Société de
Linguistique de Paris, t. IX).

Փոքր 33 էջերավ տեսր մ'է, յորում
հայոցէնս քաջածնոթ Մէյէ ջանացեր է
պարզել՝ նախ հայերէն լիուուի մէջ ածակա-
նին համաձայնութեան և անհամաձայնու-
թեան կանոնները, հաստատելավ որ աշխար-
հարարի մէջ երբեք չհամաձայնիր: Այլ և
այլ կանոններ մէջ բերեն տառե՞ զանց ը-
րած չէ անսնց վերաբերալ վկայութիւններ
ալ յիշատակելու նախնեաց զրուածներէն: Մինչեւ 12դ էջը՝ իւր լիուուին հմուտ Հա-
յու համար նորութիւն մը քրիթէ շրովանդա-
կեր, այլ զիստարապէս ուրիշ կերպարանքի
տակ կը ներկայացըն նոյն կանոնները, զրոս
Մէյէնս տառաջ կանիներ է թագրատանին իւր
Զարդացելոցին մէջ մահրաման աւանդելու,
անոր համար այլպիսի բացատրութիւնը կա-
նոնաց՝ օտարազգիներուն համար հետաքրք-
րական իրան ըլլալ քան հայազգիներուն:
Իսկ 12դ էջէն մինչեւ 24 կը բովանդա-

կէ տեսրս զեղեցիկ պատմական լեզուարա-
նական համառօտ տեսութիւն մը, յորում
հայոցէտո կը ցուցընէ թէ հայ լեզուին մէջ
փոփուուած է ածականի կանոնաւոր հա-
մաձայնութիւնն՝ որ հին հնդեւրապական լե-
զուաց մէջ կայ: Եւ զայդ կը հաստատէ ո-
րինակներով: — Ազա սեսի զանազանուու-
թին ըլլալն եւս հայերինի մէջ՝ առաջ եկած
կը համարի ածականի անհամաձայնութենէն:
Թէպէտ, կը յաւելու, հայերէնս այս կրին
կտսերու մէջ շեղեր է բայց հոլովմանց մէջ
մհծապէս հաստատոն և պինդ կեցեր է, ի
բաց առեալ կողականի:

Ազա նոյն տեսութեան մէջ զհայերէն կը
համեմատէ Վլացի և Կովկասեան լեզուաց
հետ, առանց յոդնակիր կազմութիւնը քննե-
լով, և Եսցրեթի կարծիքը կը հերբէ իրեւ-
թէ եր հայ. յոդնակիր կազմութիւնն յառաջ
եկած ըլլայ կովկասականէն:

Եարունակելով այդ ուսումնափրութիւննը,
բայերուն անցիալին մէջ եալ վերջաւորու-
թեան և անոր համաձայնով սեսական հո-
լովի վրայ կը խօսի, ապա թուական բա-
ներու հոլովմանց վրայ:

Տեարփս երկրորդ մասն է. Etymologies
Արմենիենն յորում (էջ 22...) Մէյէ
կը պարզէ զանազան ածականներու և ուրիշ
բառերու կազմութեան կերպը, մէջ բերելով
օրինակներ. զոր օրինակ, խմոր – անիմոր.
ման – անման. և այս կէտը կը համեմատէ
լատին, իունատական և զենտ ձեւերու հետ.
– յայտ է թէ յունականն ալ նոյն կերպովէ:

Կը պարզէ փոք, բառ, երկու, մատն բա-
ռերու վրայ բրած խորհրդածութիւնները,
որոնց բառ բաւականի հետաքրքրացարծ են:
— Ազա նր = նստիմ, նիտամ, մասնկան
վրայ կը խօսի: — Յունական կրինակ ձեւը
(γεδօսելեմենտ) զիտել կու տայ հայերէն
վաղվագել, բներեկել և այլ բառերու մէջ. —
զարձեալ՝ նոռ վերջաւորութեամբ բայերուն
համար կ'անզրպազարձնէն որ նախնականց
են. զոր օրինակ, անեւմ, զգենում, և այն: Իսկ
32դ էջին մէջ, սեր բային և զրին փա-
փոխութիւններէն առաջ եկած ձեւերը կը յիշէ,
Անոնեանի յօդւածը միշտակելով (Բազմ.
1898, էջ 226), տիրասպան, տերուրիւն,

և այլն : — Հայագետս կը կնքէ իւր ու սումնափրութիւնը, երեսուն, մեղր, մեղոս հայ բարից վրայ այլ և այլ լինուափիտական անութիւններ ընելով . արդէն մեղր բարին համար լակարտ և Հիւազման ըսեր էին թէ յոյն Մէծ բարին զոյփն է : — Արդեօք միայն այս օտարազգի հայոց Ետք ըսին . հայ յունագէտք և քերականը չե՞ն ըսած շատուց նոյն բանը, և նոյն իսկ ուրիշ կէտերու մէջ ալ :

Այս փոքր երկասիրութիւնն եւս՝ լեզուազիտական կշռոյն մէջ իրեն սեփական կէտը անշուշտ կը գրաւ :

5. — Բարացուցակ Ալստանուանց ֆրամստէնէ ի հայ. — Բ. տպագր. — Տոքթ. Ն. Տաղաւարեան : Կ. Պօլս. 1901 :

Քառասուն էջ փոքր բառագիրը կրնանք բակ այս երկու, որոյ մէջ բովանդակուած են միայն հիւանդութեանց գողղիերէն և հայերէն անուններն . բնական է թէ այդ՝ քազուած մ'է վերջին տարիններու մէջ հրատարակուած խոչըր և միջին զօրծնական բառագիրներէն և նորայրէն, և ինքն հեղինակն իրեն կը սեփականէ մէկ քանի աստղանիշ նորահնար բառեր, որոյ մէջ յաջողութիւնը կը թողունք քերականներու, այս ամառ միայն յայտնի է թէ ինքն բժիշկ ըլլալով՝ աւելի իրաւամբ սուրբենէ կը համարուի այս գործոյն կատարելութեան և ճշգութեան :

Այս առիթի կը ծանուցաններ եւս՝ որ ընդուներ ենց այն Տոքթորին մի այլ փոքրիկ երկասիրութիւնը, Տարվինականուարիւն, որուն ծաւալն թէպէտ պղտի բայց ծանրակիւն բովանդակութիւն ունի. բայց ցաւարի է որ նախապաշտարեալ սոսկ ենրադրական և կարծիքական գաղափարներով, չէ կարողացած առողջ սնունդ մատակարարել իւր ընթերցողաց : Բայց այս կարեւոր սուսումնական կէտին վրայ պիտի վերապանուանը սակաւ ժամանակէն ընդարձակօրէն :

6. — Դնուանամների ազատ ընթերցանութիւնը. — Արտապայծ «Մուրճ» ամսագրից . 1899. Յ. Տէր-Միրաքեան :

Գրքիս նպատակն է պարզել մի առ մի պա-

տանեկուց ընթերցանութեան և զրելու վախճանը, նիւթը, ընթերցման գրոց առաջինան ները, որոց հատ մը ցանկ ալ կցած է զրբին վերջը : Զանացած է հեղինակն արդի ուսումնական կրթութեան մակերեւութիւն բարձրացընել հայ մանկուայն, պատանեկաց միտքն ու հանճարը . սակայն հեղինակն ազատ պիտի շրլայ վրիպակիներէ, եթէ ազատ համարձակ ընթերցանութիւնն քարոզէ, որով մասաւազ մանկուայն նորափիթիթ սիրան ու միտքը խամրին՝ շարը մը մարդկութեան անարժան գաղափարներու խորշակացուն հովով, թէպէտ և գիրքն, որ կը պարունակէ այլպիսի գաղափարներ, հիանալի սնով զրուած ըլլայ, Վերջին աարիններու փորձն ցուցուց . որչափ անձնասպանութիւնը, ոճիքը, և այլն :

7. Դամոնկւեան սուր. — Դրամա (Խոփուկ) երեք արարուածով. Բ. տպագր. Հեղինակութիւն Էմին Տէր-Գրիգորեանցի. Երեւան. 1900 :

Գրգուկիս երկրորդ տպագրութիւն ըլլալն իսկ կը ցուցընէ որ քիչ շատ ընդունելութիւն գտեր և այս խաղը՝ թատերասիրաց կողմէն, — խազս երեք արարուած ունի. Ա. Անեւ ամպեր. — Բ. Սարսակելի գաղտներց . — Գ. Մեղատրը դատասոր. Մի քանի անձնից հայկական անուններ կը կրն, անշոշտ որպէս զի խաղը հայկական համարուի, թէպէտ և նիւթի անտարբեր է :

8. — Տալեք աւ խաղիր . — Խմբագրեց և կազմեց Աղեք. Միկիթարեանց . Աղեքսանդրապոլ. 1900 :

Ինչպէս հրատարակութեանոն ճակատին վըրայ գրուած է; այդ 260 էջերէ բաղկացած կիրին է «Հարուստ ժողովածու կրօնական տաղերի, շարականների, այլ և այլ բանականութեան, ժողովրական երգերի և պարերգերին». չորս բաժանմունքով, խմբագրողն զայդ նուիրեր է իւր և սիրատան թառնիկին» . այդ պատճառաւ կարելի է ըսել թէ՝ այս հրատարականութիւնն առաւելապէս սրտի զգացմանց արգիւնը է, որ և աւելի կը հաստատուի անով՝ որ ընտրուած ասդերն ու շարականներ և բանահիւսութիւններ՝ զգացուն

կտորներու ընտրութիւններ են : իրեն ահա սակին մէջ ընտիր հաւաքածոյ մ'է, որոյ մէջ կան եւս նշանաւոր տնձանց և բանաստեղծից հատուածներ, ինչդեռ Գամար-Քաթիւպայի, Պէտքիթաշլեանի, Ալովիսանի : — Առաջին բաժինն իր կրօնական օծումն ունի, իսկ միւս մասերին՝ մանուանդ ժողովրդական բաժինն հետաքրրոշարժ է և կը պարունակէ ուամկական զեղեցկութիւն աշուղներու սրտառուչ եղանակներուն :

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ



ԳԵՂԵՑԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ

— — —

(Ըար. տես յէջ 78)

ՄԱՍՆ Բ

Գ. Լ. ՈՒ Խ Է

ԱՅ :

1. Իրաւամիք Փիփօն բառը, և Ոճը՝ մարզնէն : Զանազան հզօր հանճարներու մի և նոյն նիթին վրայ զրուածքը կարգալոյ ուրեց ուրեց համանան զադափարներ ալ զանելով՝ կը տեսնուի անոնց տարբերութիւնը անոնց շեշտին կամ ներշնչութիւնն : Ոճով է այսինքն ըմբռնելու՝ զգալու և բացարելու տարբերութեամբ որ ազգ մ'ուրիշ ազգէ, զար մ'ուրիշ զարէ և անհատը իրարմէ կը տարբերին : Մթջակ արուեստաւորը անոն են՝ ուրովինետեւ միջակ սահմանէ մ'անդին չեն անցնիր : Ընկերական յեղաշրջութեանց ամէն զարացուիներուն ընդհանուրը չափ մը կայ որ այն ժամանակին հոգեկան վիճակի միջինն է : Ան է միջակ արուեստաւորին ալ սահմանն՝ որ կորստեան զատապարտաել է այդ միջինին փախուելով : Ան ալ ոճ մ'ունին զանազան զարծուածքներու (procéder) – թերեւու և ճարտարաշիւ զարծուածներու – հաւաքածոյ մ'է . բայց չէ բան իսկ ոճը որ հոգեկան հնչին մ'է զոր մեր ձեռքը չէ

ստանալ՝ ինչպէս կապարը չկրնար պղնձի կտմ արծաթի հնչականութիւնն ստանալ :

2. Բայց կարծելու չէ թէ ոճը՝ նոյն իսկ մեծ հանճարներուն՝ կարոտ ըլլլայ յդիւելու և մշակուելու զիտողութեամբը և փարձուութեամբը : Թէ և խորը նոյն կը մնայ՝ այլ շնորհիւ ձեւին՝ զարգացումը կ'աւելիայ և ուղղութիւնը կը զօրանայ :

3. Ոճ բան ուրիշ իմաստ մ'ալ ունի, մինչեւ հեղինակի մը ժամանակիը երեցած մեծ հանճարներուն զարէ զար աւանդութիւնը կան որը մարգկային մատց ոլացքին ընդհանուր թոփչքն և ուղղութիւնը կը ցոցնեն և կերպով մը իտէալին ճամբուն իրրեւ նշանահարցն (jalon) են : Անձնաւորութեան կորոյլը պահելին յեաս՝ ամենէն աւելի ուսումնասիրելի ոճն այն է, զամն զի այդ չափն իրրեւ սրբէն ստացեալ յաղթանակ մ'է մարգկութեան համար :

4. Ընդհանուր ոճի վրայ խօսելու ատենինի՝ արժան է պահ մը համառօտաի բացատրել երկու մեծ բաժանումները որ այնչափ բնդ երկար և մնուի վիճաբանութեանց տեղի տուած են :

Եթէ մարգկային որտին առ զեղեցիկը ձկուումը ամենուրեց և ամեն տեսն կայ, եթէ զեղեցին մեր վրայ զործած տպաւորութիւնը և յարուցած յուզումը ամեն տեղ նոյն բուն հաճայքը կը զործն, եթէ վիրշացէս զայն բնտուելու հզանակի նոյն է այնու որ ամէն տեղ ներշնչութեան՝ բնասուր մեծ ձրից և ճշմարիտ յուզման պէտք ունին անոր ըլլըռնումն և արտայայտութիւնը, սակայն ոչ բնեան ոչ զացմանց և ոչ իր յայանութեանց մէջ զեղեցիկը միօրինակ չէ, կամ՝ ինչպէս ըսինք՝ առանձին ազգի մը կամ ժամանակի մը սեփականութիւնը չէ : Այդ զացման բարգաւաճումն և ուղղութիւնը զանազան պայմաններու ենթարկեալ է որոնց կրնան բուրովին տարբեր ճամբաներով զեղեցիկն նոյն տենչալի վայելման տանել զիեւ : Եւ ոչ այսափ միայն, այլ եթէ մէկ յեղին ճաշակը՝ որչափ հրաշալիք ալ ենթարկենք՝ ուզէինք ամբովզ մարգկութեան զարտազրին՝ ոչ միայն հանճարոյ սապարէզը սահմանաւորած կը լայինք՝ այլ նաև մարգկաթիւնը զրկելով